ԿԱՐԾԻՔ

ԿԱՌԼԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ԱՆՁԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԹ.00.01- /ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ

Ժամանակակից գիտության համար խիստ արժեվորվում է որոշակի հիմնախնդիրների, հասկացությունների, տեսությունների առավել նորովի, օբյեկտիվ մեկնաբանումը: Այդպիսի հիմնախնդիր է հոգեբանական գիտության համար անձի տնտեսական վարքը: Ըստ ժամանակակից տեսությունների տնտեսական վարքը դիտարկվում է որպես սոցիալական գործողությունների համակարգ, որը կապված է տարբեր նշանակության և գործառույթներ ունեցող տնտեսական ռեսուրսների օգտագործման հետ, և կենտրոնացած է դրանց շրջանառությունից օգուտ (եկամուտ, վարձատրություն, շահույթ) ստանալու վրա: Որպես սոցիալական ֆենոմեն՝ տնտեսական վարքը ուսումնասիրության առարկա է ինչպես տնտեսագիտական այնպես էլ սոցիալական, հասարակագիտական գիտությունների համար, պարզվում է, որ այն կարևորնում է նաև հոգեբանության կողմից: Այս համատեքստում հոգեբանական գիտության մեջ արդիական են դարձել այնպիսի հիմնախնդիրների լուծումները, որոնցում անձի անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկությունները հանդես են գալիս որպես նրա տնտեսական վարքի վրա ազդող գործոններ: Անձը սոցիալական էակ է, քանի որ նա ձևավորվում է հասարակության մեջ, հասարակության հետ շփումների արդյունքում: Անձի տնտեսական վարքը հետազոտելիս պետք է հաշվի առնել վարքն ուղղորդող ոչ միայն տնտեսական, այլև անձի պերցեպտիվ և կոգնիտիվ գործընթացները, ինչպես նաև խառնվածքով, բնավորությամբ, կամային որակներով, արժեքային համակարգով, դիրքորոշումներով, կարծրատիպերով, ինչպես նաև հասարակական, իրավական և քաղաքական գործընթացներով պայմանավորված գործոնները: Այսօր կարևորվում է այն հարցը, թե ինչպես են անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական գործոններն

ազդում նրա տնտեսական վարքի վրա: Այս համատեքստում արդիական են դարձել անձի տնտեսական վարքն ուղղորդող հոգեբանական օրինաչափությունների բացահայտման և այդ օրինաչափություններով պայմանավորված վարքի առավել իրատեսական մոդելների կառուցմանը նվիրված հետազոտությունները:

Վերը նշված հիմնախնդիրներին է միտված Կառլեն Վաղարշակի Ոսկանյանի ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ «Անձի տնտեսական վարքի մոդելավորման հոգեբանական օրինաչափությունները» խորագրով թեկնածուական ատենախոսությունը: Անձի՝ հոգեբանական գործոններով պայմանավորված օրինաչափությունների հաշվառմամբ տնտեսական վարքի մոդելավորման հարցերին նվիրված հետազոտություններ Հայաստանում սակավաթիվ են: Այդ բացը մասամբ լրացնելու նպատակ է հետապնդում սույն հետազոտությունը: Հեղինակի նպատակն է եղել հետազոտել անձի տնտեսական վարքի հոգեբանական գործոններով պայմանավորված այն օրինաչափությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ տնտեսական վարքի ինդուկտիվ մոդելների ձևավորման համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության բաժնում հեղինակը գիտականորեն և հստակ ձևակերպում է թեմայի այժմեականությունը, խնդրի մշակվածություն աստիճանը, թեմայի ընտրության նկատառումները, տարբերակում հետազոտության սուբյեկտը և օբյեկտը, առաջադրում հետազոտության գիտական վարկածը, ըստ որի «անձի՝ տնտեսագիտական տեսություններում ընդունված օգտակարության ֆունկցիայով հաշվարկվող տնտեսական վարքի արդյունավետության ցուցանիշները, որոնք հոգեբանության տեսանկյունից հարաբերական են համարվում, չեն արտացոլում անձի տնտեսական վարքի վրա հոգեբանական և սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունների իրական հարաբերակցությունը: Հետևաբար, անձի տնտեսական վարքի վրա ազդող հոգեբանական գործոնները համարելով իրավիճակային փոփոխականներ, տնտեսական

վարքի հիմքում պետք է դիտարկել գործառնական-դինամիկ արդյունավետության սկզբունքը»:

Նպատակի լիարժեք իրագործման համար նշվել են կոնկրետ խնդիրներ, որոնք թեզի շարադրման համար ուղեցույց են հանդիսացել: Համառոտ և մատչելի ձևով տրվում են պաշտպանության ներկայացվող դրույթներն և մեթոդիկաները:

Առաջին գլուխն իր մեջ ամփոփում է հիմնախնդրի ելակետային դրույթների հետ կապված ժամանակից գիտական աշխարհում գերիշխող մոտեցումները: Աշխատանքը հաջողված է, քանի, որ հիմնահարցը մեկնաբանվել է համակարգված ձևով, տարբեր գիտական ուղղությունների տեսանկյուններից: Հեղինակի արհեստավարժության մասին է խոսում այն փաստը, որ նա կարողանում է հստակ կողմնորոշվել հիմնահարցերի հետ կապված տարբեր տեսություններում, հակադրվելով կամ որոշակի դրույթներ հիմք ընդունելով՝ կատարում նոր եզրահանգումներ: Աշխատանքը իրականացնելու նպատակով հեղինակը ուսումնասիրել է 182 գիտական սկզբնաղբյուրներ:

Աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում հոգեբանական գործոններով պայմանավորված տնտեսական վարքի մոդելների տեսակներին, մեկնաբանություններին, նրանց գործածելիության շրջանակին, անձի տնտեսական ընտրանքների և տնտեսական վարքի արդյունավետության հարցերի շուրջ նեոդասական, ինստիտուցիոնալ, էվոլյուցիոն տնտեսագիտական ուղղություններում, Նեյման-Մորգենշտերնի ակնկալվող օգտակարության, Հ. Սայմոնի սահմանափակ արդյունավետության և Կահնեման-Տվերսկու հեռանկարների տեսություններում ընդունված մեթոդաբանական մոտեցումներին և առանձնահատկություններին, ինչպես նաև առաջարկվում է համապատասխան ապրանքագնային տարածության մաթեմատիկական մոդել: Պետք է նշել, որ այս գլխի արդյունավետ շարադրմանը նպաստել է այն, որ հեղինակը իր բակալավրիական կրթությամբ տնտեսագետ-մաթեմատիկոս է, փաստորեն հոգեբանի և մաթեմատիկոսի որակավորումները համադրվելով նպաստել են հիմնախնդրի մուլտիդիսցիպլինար և համակարգված ներկայացմանը:

Երրորդ գլուխը նվիրված է հիմնախնդրի հետ կապված գիտափորձերի մեթոդիկային, մեթոդներին, կատարված գիտափորձերի արդյունքների վերլուծությանը: Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են տեսական վերլուծության, համեմատության և համադրման, ինդուկտիվ, տեսական ընդհանրացումների և վերացականից կոնկրետի անցման, փարձարարական տվյալների քանակական և որակական վերլուծության, արդյունքների մշակման վիճակագրական, թեստավորման, հեղինակային հարցարանների միջոցով հարցման, մաթեմատիկական մոդելավորման մեթոդներ: Վիճակագրական վերլուծությունն իրականացվել է EXCEL-2017, SPSS-23 մաթեմատիկական վիճակագրական համակարգչային ծրագրերով: Գիտափորձերի իրականացման մեթոդաբանությունը գիտական է, տրամաբանված, իսկ ստացված տվյալների մշակումը համապատասխանում է ընդունված նորմատիվներին: Փորձարարական հետազոտությունը կազմակերպված է առավելագույն ճշգրտությամբ, գիտահետազոտական աշխատանքին բնորոշ անաչառությամբ:

Փորձարարական մասից հետո ատենախոսին հաջողվել է աշխատանքի վերջում իր ուսումնասիրություններն ամփոփել 8 եզրակացությունների ձևով:

Փաստորեն, հեղինակը

1. Հիմնավորել է, որ անձի տնտեսական վարքի արդյունավետության տնտեսագիտական ցուցանիշը հարաբերական է այնքանով, որ նրանում չեն հաշվառվում անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք կարող են հանգեցնել վարքի իռացիոնալ դրսևորումների:
2. Բացահայտել է տնտեսական անձի վարքին բնորոշ այն հիմնական օրինաչափությունները, որոնք պայմանավորվում են անձի հոգեբանական առանձնահատկություններով և սոցիալ-հոգեբանական գործոններով:
3. Կառուցել է ապրանքագնային տարածության մաթեմատիկական մոդել, տնտեսական վարքի վրա հոգեբանական գործոնների հաշվառման պարագայում մեկնաբանել նրա հետ զուգորդվող ռիսկային հեռանկարի (վիճակախաղի)

անձնային մոդելի և ակնկալվող օգտակարության ֆունկցիայի (ծախսերի ֆունկցիայի) կառուցվածքները:

4. Կառուցել է հոգեբանական գործոններով պայմանավորված անձի տնտեսական վարքի իրադրական մոդել, որը կարող է որպես ենթամոդել օգտագործվել տնտեսական վարքի համահասարակական ընդհանրական մոդելների կառուցման համար:

Նշենք, որ վերը նշվածը Կ.Ոսկանյանը ներկայացնում է որպես հաջողված գիտական նորույթ:

Կառլեն Վաղարշակի Ոսկանյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը գրված է գիտական բարեխղճությամբ, խնամքով ու գրագետ: Բովանդակությունն արտացոլող գլուխներն ու վերնագրերը առավել քան համոզիչ են ու համահունչ, հիմնախնդրի բարձրացման, ուսումնասիրման ու վերլուծման քայլերը տրամաբանորեն կապակցվում ու հաջորդում են միմյանց: Ամենակարևորն այն է, որ աշխատանքն ունի գործնական ուղղվածություն, այն կարող է արդյունավետ ուղեցույց լինել անձի տնտեսական վարքի հոգեբանության հիմնախնդիրներով զբաղվող պրակտիկ մասնագետների համար:

Ներկայացվող աշխատանքում մեծ թիվ են կազմում աղյուսակները, որոնք նպաստում են տեքստի զննական և ամբողջական ներկայացմանը:

Թեզի շարադրանքը գիտական է, մատչելի, իսկ առաջարկվող նյութը՝ հետաքրքիր: Այն անձին մղում է մտածելու և խորհելու: Վերը նշված արժանիքների հետ կապված ատենախոսության մեջ առկա են որոշակի թերություններ, որոնց հաշվի առնելը մեր կարծիքով ավելի ամբողջական կդարձներ սույն աշխատանքը.

1. Մարդու կենսագործունեության նպատակը բնական և հասարակական միջավայրին հարմարվելն է, իսկ դա նշանակում է անընդմեջ կոգնիտիվ և հուզական դիսոնանսի պայմաններում խնդիրներ լուծել, որոնք հաճախ համահունչ չեն սեփական պահանջմունքներին, դիրքորոշումներին, բայց տվյալ պահին դրված նպատակի իրագործման համար անհրաժեշտ են: Մարդու գիտակցության գործառույթներից մեկը նրա վարքի, գործունեության

կարգավորման և գնահատման գործառույթն է: Այս գործառույթն իրականացնում է անձի կամային կառույցը: Գիտակցված և նպատակաուղղված բոլո՛ր գործողությունները կամային են, քանի որ կամք է գործադրվում, երբ մարդը նպատակ է դնում, վճռականություն է հանդես բերում՝ որոշում կայացնելիս, դժվարություններ հաղթահարելիս, ցանկալին անցանկալի, բայց անհրաժեշտով փոխարինելիս, ցանկալի արդյունքին հասնելու ընթացքում սպասելու, համբերելու անհրաժեշտության դեպքում: Կամային ջանքը ունի ակտիվության դրդող, արգելակող, կարգավորող, մարդու բոլոր՝ ֆիզիկական, ինտելեկտուալ, բարոյական ուժերի հավաքագրման գործառույթներ: Էջ 43-ում մեկ բառով նշվում է այս մասին, կարծում ենք, որ անձի տնտեսական վարքի համատեքստում անհրաժեշտ է խորությամբ արժևորել նաև այս որակը:

2. Կարծում ենք, որ անձի տնտեսական վարքը փոխհարաբերվում է դինամիկ վարքի հետ՝ իրադրությունից, հուզական վիճակներից կախված տնտեսական վարքը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների: Հետևապես դինամիկ վարքը տվյալ պարագայում ելակետային հասկացություն է:
3. Ատենախոսության մեջ և սեղմագրում հետազոտության վարկածը նույն ձևով չէ շարադրված, սեղմագրում ավելացված է Կահեման-Տվերսկու հետազոտություններ բառակապակցությունը (ատենախոսության մեջ էջ 8, սեղմագրում էջ 4):
4. Սեղմագրի ռուսերեն և անգլերեն թարգմանություններում պաշտպանության ամսաթիվը չի համընկնում հայերեն տարբերակի հետ (էջ 19, 21):
5. Գործնական առաջարկություններ բաժնում ներկայացված մոտեցումները նպատակահարմար էր շարադրել համակարգված և խմբավորված ըստ արժևորման աստիճանի: Այստեղ նպատակահարմար չէ Վ.Միրզոյանի և Ա.Մարտիրոսյանի մտքերին դիմելը: Առաջարկությունները պետք է ներկայացնել ըստ սեփական հետազոտության արդյունքների (էջ 127):

Սակայն նշված դիտողություններն չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, այլ միտված են աշխատանքի գիտական արդյունավետության առավել բարձրացմանը, ուստի գտնում ենք, որ Կառլեն Վաղարշակի Ոսկանյանի «Անձի տնտեսական վարքի մոդելավորման հոգեբանական օրինաչափությունները» ատենախոսական թեզը ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, ունի գիտատեսական և գործնական նշանակություն, արդյունքները հավաստի են, հրատարակված հոդվածները արտացոլում են ներկայացվող հիմնախնդիրը: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում է, ինչպես նաև համապատասխանում է ԺԹ.00.01 /Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն/ մասնագիտական թվանիշին: Ատենախոսության սեղմագիրը լիովին արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ ԿԱՄՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՄՈ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ.
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂՂԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ
17.05.2022թ.